ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՁԵՌԱԳՐԱՏՈՒՆԸ

Հայկական գրերի Մաշտոցյան արարմամբ հիմքը դրվեց և Ս. Էջմիածնի Մատենադարանի՝ հունարենից և ասորերենից թարգմանված գրքերով և հետագայում գրված մատյաններով: Հայագետների հաշվումներով հայկական տառերի ստեղծման թվականը համարվում է 406 թ., որով Վաղարշապատի հնագույն ձեռագրատունն այսօր ունի շուրջ 1590 տարվա պատմություն:

Սակայն անցնող 16 դարերի ընթացքում այստեղ գրված բազմահազար մատյանների, ինչպես նաև Հայաստան մեր երկրի այլ վանքերից ու վայրերից Վաղարշապատում հավաքված գրչագրերը կիսել են հայ ժողովրդին բաժին ընկած ճակատագիրը: Ձեռագիր շատ մատյաններ վառվել և կողոպտվել են, աքսորվել և տարվել հեռավոր օտար երկրներ:

Համաձայն միջնադարյան վկայությունների, օտար ասպատակողները կողոպտել են նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պահպանվող ձեռագիր մատյանները՝ քաջ գիտենալով, որ մշակութասեր հայ ժողովուրդը հայկական ձեռագրերին ավելի բարձր արժեք է տվել և գնահատել, քան ոսկուն ու արծաթին:

Միջնադարյան մեր տառապալից պատմության ընթացքում քիչ դեպքեր չեն եղել, երբ մեր պապերը կողոպտված ձեռագրերի հետքերով գնացել են օտար երկրներ և, մեծ փրկագին վճարելով, ազատել դրանք ու կրկին փոխադրել Մայր Հայրենիք, ճիշտ այնպես, ինչպես դրամական փրկագին տալով՝ օտար ասպատակողների ձեռքից ազատել են գերիներին:

Ձեռագրեր կան, որոնք իրավամբ դարերի ընթացքում փրկվել են ստույգ վտանգներից, անցել հրի ու ջրի միջից, քաշվել սրի: Ձեռագիր մատյաններ կան, որոնց մի մասը վառված է՝ փրկված լինելով կրակի

բոցերից: Գրքեր կան, որոնք եղծվել են ջրից: Պահպանվել են նաև ձեռագրեր, որոնց վրա արյան հետքեր կան:

Սակայն ամեն փոթորիկից հետո, հայ մարդիկ հավաքել են մեր ձեռագրերը զանազան վանքերում և աշխատել փրկել դրանք կորստից ու պահպանել ամենայն վտանգներից:

Եվ այսպես՝ երկայն դարեր, մինչև հասել են խաղաղ տարիներ, որով վերջնականապես փրկվել են օտարների լծից ու ասպատակություններից, թալանից ու սրածություններից հայ ժողովուրդը, Սուրբ Էջմիածնի վանքը, ինչպես նաև նրանց հետ մեր ազգային սրբությունները հանդիսացող հայկական ձեռագրերը:

1939 թ. Հայաստանի պետական իշխանությունների բարեխնամ հոգատարության շնորհիվ Վաղարշապատի նախկին ձեռագրատան գրչագրերը տեղափոխվեցին Երևան, որտեղ հիմքը դրվեց Մեսրոպ Մաշտոցի անվան աշխարհահռչակ մեր փառավոր Մատենադարանի՝ ստեղծելով միևնույն ժամանակ նյութական բոլոր նպաստավոր պայմանները՝ դրանց «վերքերի» բուժման, պահպանման և գիտական ուսումնասիրության համար:

Դարերի ընթացքում հարյուր հազարից ավելի մատյաններ են գրվել, որոնցից այսօր աշխարհում պահպանվել է մոտ 30 հազարը: 13 հազարից ավելին գտնվում է Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում, շուրջ 10 հազարը՝ Երուսաղեմի, Վենետիկի և Վիեննայի երեք վանքերում, իսկ մնացած յոթ հազարն էլ՝ Նոր Ջուղայի, Անթիլիասի, Զմմառի հայկական վանքերում, Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Փարիզի, Լոնդոնի, Բեռլինի, Վատիկանի և այլ մայրաքաղաքների Ազգային գրադարաններում, Բուխարեստի, Փարիզի, Լիսաբոնի մշակութային կենտրոններում, Ինչպես նաև հայ և օտարազգի անհատների մեծ ու փոքր հավաքածուներում:

Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո, բազում այլ շինարարական աշխատանքներից բացի, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ձեռնարկեց նաև աշխարհով մեկ սփռված հայկական ձեռագրերի հավաքումը և մեկտեղումը Էջմիածնում՝ շարունակելով Մայր Աթոռի 16-դարյա ձեռագրատան ավանդները: Կաթողիկոսարանում, Նոր Վեհարանի երկրորդ հարկում, Հայրապետական գահասրահի կողքին,

մի հատուկ սենյակ է հատկացված, ուր գտնվում են վերջին 45 տարում հավաքված ձեռագրերը:

Կաթողիկոսարանի արխիվում ու հոգևոր ճեմարանի գրադարանում պահպանված ձեռագրերին հավելվեցին աշխարհի չորս ծագերից նվեր ստացվածները, որոնց թիվն այսօր հասնում է շուրջ 1200-ի /1100 ամբողջական ձեռագրեր և 100՝ պատառիկներ/: Ձեռագրատան ֆոնդի աճմանը մեծապես նպաստել է Մայր Աթոռի միաբանությունը: Այսպես, օրինակ, Սպահանի թեմի նախկին առաջնորդ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը 1946 թ. Նոր Ջուղայից Էջմիածին է ուղարկել 28 գրչագիր Ավետարաններ և այլ ձեռագրեր, իսկ Սպահանի Ղարմահալ գավառից էլ՝ 22 մատյան:

Թեհրանի թեմի նախկին առաջնորդ Տ. Ռուբեն արքեպիսկոպոս Դրամփյանը նույն թվականին Թեհրանից Մայր Աթոռ է ուղարկել զանազան բովանդակությամբ 16 ձեռագիր: Արարատյան հայրապետական թեմի նախկին առաջնորդական փոխանորդ Տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանն անցյալում նվիրել է հինգ ձեռագիր: Ռումինիայի և Բուլղարիո թեմերի առաջնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը երեք գրչագիր է նվիրել:

Մայր Աթոռի ձեռագրատունը ինը մատյան է ստացել Կահիրեի, ութ՝ Գյումրիի, չորս՝ Սոֆիայի հայոց առաջնորդներից: Բազմաթիվ բարեպաշտ անհատներ զանազան ձեռագրեր են նվիրել, որոնց մեջ աչքի է ընկել Հրանդ Նասիպյանը՝ իր ուղարկած հինգ գրչագրերով: Ձեռագրատունը վերջին 36 տարում բազմաթիվ հայերեն և օտար լեզուներով ձեռագրեր է ստացել աշխարհի հայաբնակ տարբեր քաղաքների /Բաքու, Բեյրութ, Բոմբեյ, Երևան, Լոս Անջելես, Կալկաթա, Կահիրե, Մադրաս, Մոսկվա, Նիկոզիա, Նյու Յորք, Նոր Նախիջևան, Ստամբուլ, Փարիզ և այլն/ հայկական եկեղեցիներից և անհատ նվիրատուներից:

Շատ քահանաներ են նվիրվել հայկական գրչագրերի հավաքման նվիրական գործին. Տ. Մկրտիչ ավագ քահանա Զորչոփյանը /Ռոստով/ և Տ. Խաչատուր ավագ քահանա Տեր-Հարությունյանը /Մոսկվա/, ինչպես նաև Տ. Նորայր ավագ քահանա Սարգսյանը /Գյումրի/, Տ. Հովհաննես քահանա Կարապետյանը /Երևան/, Տ. Հովհաննես քահանա Դանիելյանը /Ախալցխա/, Տ. Շավարշ ավագ քահանա

Պալրմյանը /Ստամբուլ/ և ուրիշ շատ քահանաներ մի քանի ձեռագրիր են նվեր ուղարկել Ս. Էջմիածնի ձեռագրատանը:

Նորոգ հանգուցյալ Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը մեծապես նպաստել է ձեռագրատան կազմավորմանը, լավագույն պայմանների ստեղծման և գրչագրերի հավաքման և կենտրոնացման դժվարին, սակայն շնորհակալ գործին: Արտասահման կատարած յուրաքանչյուր ճանապարհորդությունից վերադառնալով՝ ձեռագրատուն է հանձնել բազմաթիվ գրչագրեր՝ մեծապես ճոխացնելով մեր պահոցը:

Հայերեն մատյաններից բացի, ձեռագրատունն ունի նաև բազմաթիվ ձեռագրեր զանազան օտար լեզուներով, որոնք նույնպես պահվում են խնամքով և ուսումնասիրվում: Այսպես՝ մենք ունենք բազմաթիվ պարսկերեն և թուրքերեն ձեռագրեր /մեծ մասամբ շահական և սուլթանական հրովարտակներ/, ինչպես նաև փոքր թվով արաբերեն, եթովպերեն, հայատառ թուրքերեն, հունարեն և վրացերեն գրչագրեր: Կան նաև լեհերեն, լատիներեն, եբրայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, վրացերեն և այլն, ընդհանուր հաշվով 16 օտար լեզուներով:

Մայր Աթոռի ձեռագրատունն ունի շուրջ 200-ի հասնող Ավետարաններ, նվազ քանակությամբ՝ Հայսմավուրքներ, շարակնոցներ, տաղարաններ, կոնդակներ, բժշկարաններ, հմայիլներ, պատմագրքեր և այլաբնույթ այլ ձեռագրեր: Մեծ մասն ունեն կաշեպատ, լաթակազմ և ստվարաթղթով կազմեր: Վերը նշված ձեռագրերից բացի, ձեռագրատանը գտնվում են նաև քարոզգրքեր, աղոթագրքեր, գուշակարաններ, սաղմոսարաններ, պարզատումարներ, ճաշոցներ, կանոնագրքեր, բառարաններ, մաշտոցներ, տոնացույցեր, վարք սրբոցներ, ժողովածուներ, կալվածագրեր, ինչպես նաև Ղուրան, Ժամագիրք, Նարեկ, Ոսկեփորիկ և Ձեռնադրության Մաշտոցներ:

Ձեռագրատանը կան 12 մագաղաթյա և թղթյա Ավետարաններ, որոնք ունեն արծաթյա կազմ: Սրանք ներկայացնում են հայկական արծաթագործության հիանալի նմուշներ՝ պատրաստված հայ վարպետ արծաթագործների հմուտ ձեռքերով /թիվ, թիվ 26, 39, 42, 66, 461, 464 և այլն/:

Մայր Աթոռի ձեռագրատանը կան երկու ոսկեպատ կազմով Ավետարաններ: Դրանք հանդիսանում են հայկական նրբարվեստ ոսկեր-

չության հիանալի նմուշներ, որոնց լուսանկարները կարելի է տեսնել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակած գունավոր ալբոմներում:

Ա. Թիվ 63 ԱՎԵՏԱՐԱՆ, գրված է 1484 թ. Ազարիա երեցի ձեռամբ Վանի Ս. Աստվածածին եկեղեցում: Ունի 397 թերթ: Գրության նյութը թուղթ է: Մեծությունն է 18.8 × 13.5 × 8.5 սմ: Պատվիրել է Խոջա Քարիմշեն, ծաղկողը՝ Կիրակոսը, վերջին կազմողը՝ Զիրաքը, իսկ նորոգողը՝ Տ. Սահակ քահանան: Կազմը կաշեպատ տախտակ է՝ ոսկյա բարակ թերթիկով պատված: Առաջին երեսում ճկաճնշումով նկարված են Քրիստոսը և Մարիամ Աստվածածինը, ինչպես և երկու հրեշտակներ ու երկու արքեր: Կան նաև բուսական զարդեր: Երկրորդ երեսում դարձյալ նույն կերպով պատկերված է Տիրամայրը՝ Մանկան հետ: Կազմի երկու կողերն էլ ծածկված են ոսկով: Թիկունքի բարակ և երկար երկու ոսկեջրած արծաթյա շերտերը մանր օղակներով իրար միացնում են կազմի առաջին և երկրորդ ոսկեպատ երեսները: Երկար այս երկու շերտերի վրա շատ նուրբ արվեստով փորագրված են գեղեցիկ զարդանկարներ՝ ծաղիկներով, տերևներով և ճյուղերով: Միջնադարյան հայ ոսկերչության գեղեցիկ նմուշներից մեկն է սա: Գրքի բաց կողմում կա մի շերտ բարակ խավ, որի վրա ճնշումով նկարված են չորս խաչեր և տասն աղավնիներ: Այս շերտերը չորս տեղերից վնասված են, որի պատճառով երեք աղավնիները չեն պահպանվել: Վնասված այս մասը հետագայում մեխված է թիթեղյա մի կտորի վրա: Կազմի երեսներին կան 96 հատ կապույտ, կանաչ, կարմիր և սպիտակ, մեծ ու փոքր ապակյա հասարակ քարեր /Այս ոսկյա ձեռագրի մասին մանրամասնությունները տեսնել «Էջմիածին» ամսագրի 1951 թ. հուլիս-օգոստոս միացյալ համարում/:

Բ. Թիվ 96, ԱՎԵՏԱՐԱՆ, գրված է 1374 թ.: Հայկական զարդագրության հիանալի մի նմուշ է: Կան տերունական նկարներ, խորաններ, կիսախորաններ, լուսանցազարդեր և ծաղկագրեր, նաև հրեշտակների, թռչունների, ծաղիկների և այլ նկարներ, և գրված է Տաթևի վանքի արժանաշնորհ վանահայր Ս. Գրիգոր վարդապետ Տաթևացու ձեռամբ: Ունի 331 թերթ, նյութը մագաղաթ է, մեծությունը՝ 13.7 × 9.5 × 6 սմ, պատվիրել է իշխան Խութլու Շահը, ծաղկողը՝ Խաչատուր աբեղա Կեսարացին: Գրչության վայրն է պատմական Հայաստանի Դարանաղյաց գավառի Սեպուհ լեռը: Մագաղաթը

պատրաստողն է Հովհաննես վարդապետ Որոտնեցին: Կազմը կաշեպատ տախտակ է՝ ոսկյա հաստ թերթով պատած: Առաջին երեսի վրա մեծ արվեստով փորագրված է խաչյալ Քրիստոսը և կողքերում՝ Մարիամ Աստվածածինն ու Հովհաննես Մկրտիչը /Այս ոսկյա ձեռագրի մասին մանրամասնությունները տեսնել «Էջմիածին» ամսագրի 1952 թ. փետրվարի համարում/:

Վերջին տասնամյակներին Մայր Աթոռի ձեռագրատունն իրենց նվիրատվություններով առավել են ճոխացրել մի շարք հոգևորական և աշխարհիկ գործիչներ:

1. Տ. Ծնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը նվիրել է 21 կտոր /թիվ, թիվ 557-568 և 576-584/. նյութերը՝ աստվածաբանություն, քարոզխոսություն, Անթիլիասում և Երուսաղեմում ավանդած դասերի տետրերը:

2. Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը նվիրել է 12 կտոր /թիվ, թիվ 621-632/. նյութերը՝ պատարագ, շարակնոց, Երուսաղեմում, Կալկաթայում և այլուր գրած օրագրություններ:

3. Տ. Ասողիկ արքեպիսկոպոս Ղազարյանը նվիրել է 19 կտոր /թիվ, թիվ 601-610, 678, 683-690/. Խարբինում, Երուսաղեմում և Ավստրալիայում գրած օրագրությունները:

4. Տ. Նահապետ վրդ. Մուրադյանը նվիրել է 6 կտոր /թիվ, թիվ 671-676/ Երևանում, Գեղարդում և Էջմիածնում իր գրածները:

5. Գեորգ Սիմքեշյանը /Կ. Պոլիս/ նվիրել է 27 կտոր /թիվ, թիվ 480-506/. այս պրակները պարունակում են հայ և համաշխարհային գրականության ընտրանին /«Ոսկեմատյան տիեզերական գրականության» վերնագրով/:

6. Հակոբ Սիրունին /Բուխարեստ/ նվիրել է 14 կտոր /թիվ 767-780/, որոնք պարունակում են Կոմիտաս վարդապետի մասին կարևոր նյութեր:

7. Թագուհի Տեր-Միքայելյանը /Կահիրե/ նվիրել է 18 կտոր /թիվ 1102-1119/, որոնք ներկայացնում են շուրջ մեկ դար առաջ գրած դասատետրերը և օրագրությունները:

Վերոհիշյալներից բացի, մեր ֆոնդը տարիների ընթացքում հարստացել է տարբեր երկրներից ստացված հիանալի ձեռագրերով, որոնցից մի քանիսը հետևյալներն են.

1. ԱՎԵՏԱՐԱՆ - թիվ 166, նյութը՝ թուղթ, կազմը՝ արծաթապատ, գրիչը և ծաղկողը՝ Մարգարիտ Ալեքսանյանց /1838-1902/, ժամանակը՝ 1867-1872: Ավետարանը հիանալի մի նմուշ է գրչության և մանրանկարչության:

2. ՏՈՆԱՑՈՒՑՑ - թիվ 254, նյութը՝ մագաղաթ, գրչության թվականը՝ 1484, կրկնագիր /Palimseste/, գրիչը՝ Ալեքսանոս արեղա, գրչության վայրը՝ Ցողացքարա վանք: Ջեռագրի մագաղաթը 200-300 տարով ավելի հին է, քան 1484 թվականը:

3. ԳԻՐՔ Ա. Բ. Գ. Դ. ԹԱԳԱՎՈՐՈՒԹՑԱՆՑ - գրչության թվականը՝ 1230 թ., գրիչը՝ Ստեփանոս, գրչության վայրը՝ Հեռուանց վանք /Քեսուն/:

4. ԱՎԵՏԱՐԱՆ - թիվ 1090, ժամանակը՝ 1183 թ., վայրը՝ Դրազարկի /Կիլիկիա/ Ս. Աստվածածին վանք, գրիչը՝ Վահան քահանա:

5. ԱՎԵՏԱՐԱՆ - թիվ 461, նյութը՝ մագաղաթ, գրիչը՝ Գրիգոր երեց, ծաղկողը՝ Խաչատուր երեց, գրչության վայրը՝ Քոթահիա:

6. ՑՈՒՂԱԲԵՐԻՑ ԱՎԵՏԱՐԱՆ - թիվ 94, ժամանակը՝ 1837 թ., գրիչը՝ Թովմա սարկավագ Կ. Պոլսեցի, կազմն ունի արծաթյա գեղեցիկ քանդակներ:

7. ԱՎԵՏԱՐԱՆ - թիվ 117, ժամանակը՝ 1669, նյութը՝ մագաղաթ, գրիչը՝ Մկրտիչ, վայրը՝ Նոր Ջուղա /Ծոշ/, Սպահան, ունի գեղեցիկ մանրանկարչություն:

8. ՊԱՐԶԱՏՈՄԱՐ - թիվ 226, ժամանակը՝ 1669 թ., գրչության վայրը՝ Էրզրում, գրիչը՝ Դավիթ երեց, նյութը՝ մագաղաթ, կազմը՝ արծաթապատ:

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ ՏՐՎԱԾ Է ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԳՐԱՆՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻՑ

1. ԱՎԵՏԱՐԱՆ - թիվ 127, վրացերեն, թվականը՝ 12-13-րդ դարեր, նյութը՝ մագաղաթ, գիրը՝ խուցուրի, գրչության վայրը՝ Վրաստան, ունի շատ գեղեցիկ կազմ՝ մինայով պատրաստված:

2. ԳԱՆՁԱՐԱՆ - թիվ 55, ժամանակը՝ 1466 թ., գրչության վայրը՝

Եկեղյաց գավառի Երզնկա քաղաքի Կապոսի անապատ /վանք/: Վերոհիշյալ երկու ձեռագրերը տրված են Մատենադարանին 12 դեկտեմբեր 1979 թ. Ն. Ս. Օ. Վազգեն Ա Հայրապետի կարգադրությամբ:

3. ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐՈՎ - /արաբերեն/ թիվ 1048, ժամանակը՝ 1219 թ., դեղաբույսերի անունները գրված են վեց լեզուներով, նյութը՝ թուղթ: Հանձնված է Մատենադարանին 9 հունվար 1994 թ.:

ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԸ ՆՎԻՐԵԼ Է ԱՅՍ ՁԵՌԱԳՐԵՐԸ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ՝ ԱՌԱՆՑ ԳՐԱՆՑԵԼ ՏԱԼՈՒ ՁԵՌԱԳՐԱՅ ՅՈՒՅԱԿՈՒՄ

1. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ՝ ՀԱՐՑՄԱՆՑ ԳԻՐՔ - ժամանակը՝ 18-րդ դար, գրչության վայրը՝ Էրզրում:

2. ԺՈՂՈՎԱԾՈՒ - Հովհաննես տարկավագի տոմար, ժամանակը՝ 1648, գրչության վայրը՝ Տրապիզոն /Այս երկու ձեռագրերը հանձնված են Մատենադարանին 17 հունիս 1981 թ./:

3. ՎԵՀԱՓԱՌԻ ԱՎԵՏԱՐԱՆ - ժամանակը՝ 1268 թ., նյութը՝ մագաղաթ, վայրը՝ Հռոմկլա, մանրանկարիչ՝ Թորոս Ռոսլին: Ստացված է Երուսաղեմի վանքից: Նվիրված է Մատենադարանին 26 հուլիս 1975 թ., որի համարն է ներկայիս 10675 /Մանրամասնությունները տեսնել «Էջմիածին» ամսագիր, դեկտեմբեր 1976 թ., էջ 46-51, Ա. Մաթևոսյանի հոդվածը/:

4. ՎԵՀԱՄՈՐ ԱՎԵՏԱՐԱՆ - ժամանակը՝ 7-րդ դար, մագաղաթյա երկաթագիր մատյան /աշխարհում պահպանված հնագույնը/: Նվիրված է Մատենադարանին 1 մարտ 1978 թ.: /Մանրամասնությունները տեսնել «Էջմիածին» ամսագիր, մայիս 1978 թ., էջ 34-51, Ա. Մաթևոսյանի հոդվածը/:

/Պետք է նշել նաև այստեղ, որ շուրջ 42 տարի առաջ Վազգեն եպիսկոպոսը Ռումինիայից Երևանի Մատենադարանին ուղարկել է նաև Բուխարեստի հայոց առաջնորդարանին պատկանող 42 ձեռագիր ևս/:

Հատուկ սովորություն է եղել, որ Հայաստանի որոշ շրջաններում

հանգուցյալ անձի հետ դագաղում թաղել են նաև մի ձեռագիր, որպես սրբություն, ի հիշատակ անշուշտ մահացած մարդու: Ահա այսպիսին է եղել, օրինակի համար, Մայր Աթոռի հավաքածուի թիվ 224 Տաղարանը /ձեռագիր նկարագրությունն ու հիշատակարանը տեսնել «Էջմիածին» ամսագիր, դեկտեմբեր 1964, էջ 57-58/, որ գրված է եղել Կ. Պոլսում 1657 թ. Հովհաննես սարկավագի կողմից:

Ձեռագիր այս փոքրիկ մատյանը արժեքավոր է մանրանկարչական տեսանկյունից: Ծաղկողը Մարկոսն է: Տաղարանն ամբողջությամբ գրված է հայկական հին խազերով: Այս արժեքավոր ձեռագիրը 1962 թ. հուղարկավորության ժամանակ հանվել է Ղզլարում /Հյուսիսային Կովկաս/ թաղվող մի ննջեցյալի դագաղից՝ ձեռամբ Տ. Ղևոնդ քահանա Մինասյանի և ուղարկվել Էջմիածին:

Ինչպես նշվեց վերևում, Մայր Աթոռի նոր ստացած ձեռագրերի ֆոնդը արդեն հասել է 1200-ի: Դրանց մանրամասն նկարագրությունը, հիշատակարաններն ու հիշատակագրությունները, ինչպես նաև մատյանի ազնիվ նվիրատուի անունը 1960 թվականից պարբերաբար տրվում են «Էջմիածին» ամսագրում: Հրատարակվածից բացի շարունակությունը կտրվի հետագա համարներում:

Հայ ժողովրդի և մեր մշակույթի պատմության համար սրբություն հանդիսացող հայկական բազմաթիվ ձեռագրեր, արտասահմանյան հայկական վանքերից բացի ներկայումս գտնվում են աշխարհասփյուռ հայության մոտ՝ բազմաթիվ երկրներում: Դրանցից ամեն մեկի գլխին, անտարակույս, դամոկլյան սրի նման, հայության համար, կախված է կորստյան վտանգը, որ մի օր օտարության մեջ անպայման կընկնեն օտար մարդկանց և հաստատությունների ձեռքը: Ծատ լավ կլիներ, անշուշտ, որ դրանք մեկընդմիշտ փրկվեն կորստյան այդ վտանգից և տերերի արդար գիտակցությամբ ուղարկվեին Մայր Աթոռ, Վեհափառ Հայրապետի անունով, ճոխացնելով Հայրապետանոցի ձեռագրատունը, փրկելու ձեռագիրը ստույգ կորստից և պահպանելու նվիրատուի բարի անունն ու հիշատակը դեռ գալիք բազում սերունդների համար: Սա մի շնորհակալ գործ է, որի համար հայագիտությունն առհավետ երախտապարտ կմնա հայ ժողովրդի այդ զավակներին:

Ինչպես ազգապահպանման և ազգահավաքման գործը նվիրական է մեզ համար, նույնպես նաև անցյալի հայ մշակույթի սրբությունը

հանդիսացող հայկական ձեռագրերի պահպանումն ու ներգաղթը դեպի Հայաստան կրկնակի նվիրական արժեք ու տարողություն ունի հայ փառավոր մշակույթի դարավոր պատմության համար:

Մեզ հայտնի է, որ բազմաթիվ հայկական ձեռագրեր դեռ գտնվում են Բուխարեստի /մի քանի տասնյակ կտոր/, Կահիրեի /8 կտոր/, Նյու Յորքի և այլ քաղաքների հայոց առաջնորդարաններում, սփյուռքահայ թանգարաններում, մշակութային կենտրոններում, եկեղեցիներում, ինչպես նաև հավաքածուներ ունեցող անհատների և բարեպաշտ հավատացյալների մոտ: Ազգային տեսակետից խիստ նպատակահարմար կլիներ, որ հնարավորության սահմաններում դրանք ուղարկվեին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրատուն՝ ամփոփվելու, մեկտեղվելու և ստույգ կորստից փրկվելու համար: Բացի այդ, հետագայում դրանց ուսումնասիրությունը ևս կհրատարակվի այս ամսագրում, որպեսզի դրանց վրա կենտրոնացվի հայագետների ուշադրությունը:

Մայր Աթոռի ձեռագրատունն այս արտագին ու նվիրական կոչով դիմում է սփյուռքահայ թեմերի առաջնորդներին, ողջ հոգևորականությանը և բարեպաշտ ու հավատացյալ ազգայիներին, որպեսզի իրենց կարելին անեն՝ օտար հորիզոններում գտնվող հայկական ձեռագրերը հավաքելով փրկեն և Մայր Աթոռ ուղարկեն ապահովությամբ, առաջնորդների կամ ուխտավորների ձեռամբ, այն հանձնելով ազգիս նորընտիր Վեհափառ Հայրապետին, արժանանալով նրա Հայրապետական օրհնությանը /սփյուռքահայության թերթերին խնդրվում է արտատպել սույն կոչը/:

***

Մայր Աթոռի ունեցած թիվ, թիվ 1-687 ձեռագրերի ցուցակագրումը և նկարագրությունը լույս են տեսել 1950 թ. սկսած մինչև 1989 թ. կանոնավոր կերպով: Ապա ակամա, որոշ դադարից հետո, 1995 թ. հունվար ամսից կրկին շարունակվում է «Էջմիածին» ամսագրում, սկսած 688 համարից:

Թիվ 96 համարի տակ գրանցված ոսկյա կազմով անգին ձեռագրի Էջմիածին վերադարձի պատմության մասին:

Մինչև 1920 թ. այս ձեռագիրը, երկար թափառումներից հետո, գտնվել է Էջմիածնի Մատենադարանում: Բայց 1920 թ. Հայաստանից արտագաղթող մի չարագործ մարդու ձեռամբ այն տարվել է Պարսկաստան և մնացել անհայտության մեջ շուրջ 26 տարի:

1912-1948 թթ. Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Տ. Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը /1866-1948/ այս անգին ձեռագիրը ձեռք բերելով Թավրիզից, կրկին Ս. Էջմիածին՝ Մայր Աթոռ է ուղարկում 1945 թ.՝ ձեռամբ Տ. Կարապետ ավագ քահանա Մանուկյանի, որ Էջմիածին էր գալիս մասնակցելու Տ. Տ. Գեորգ Զ Չորեքչյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությանը և օծմանը: 1945-1951 թթ. ձեռագիրը պահված է եղել Մայր տաճարի հյուսիսային ավանդատան մեջ գտնվող գանձարկղում: Մի օր, 1951 թ. գարնանը, Վեհափառ Հայրապետն իր մոտ հրավիրեց հոգևոր ճեմարանի դասախոս և «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր պրոֆ. Աշոտ Աբրահամյանին, ճեմարանի վերատեսուչ և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Մինաս Մինասյանին և այս տողերը գրողին, գանձարկղի բանալիները հանձնելով, հանձնարարեց գնալ և գանձարկղից դուրս բերել այդ մեծարժեք և ոսկյա կազմ ունեցող Ավետարան ու պահել Մայր Աթոռի ձեռագրատանը: Այսօր ապահովության համար այն պահվում է Մայր տաճարում գտնվող հատուկ գանձարկղում՝ ի վայելումն ազգիս հայոց:

Ն. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Մայր Աթոռի ձեռագրատան վարիչ